

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2021 թվականի փետրվարի 22-ի թիվ 11 նիստում Գիտական խորհրդի նախագահ՝ Սերոբյան



Հիմք՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 31.01.2020 թվականի նիստում հաստատված ՇՊՀ-ի «Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի» կանոնադրության լրամշակված տարբերակ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է Կենտրոնի նպատակն ու խնդիրները, հիմնական գործառույթները, կառավարումը, ինչպես նաև Կենտրոնի ստեղծման, վերակազմակերպման ու լուծարման կարգը:
- 1.2. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ՇՊՀ Կանոնադրության ու ներքին իրավական ակտերի, ինչպես նաև սույն Կանոնակարգի հիման վրա:

1.3.Սույն Կանոնակարգը հաստատվում և դրանում փոփոխություններ են կատարվում ՇՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

1.4.Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ***Կենտրոնի նպատակն*** արտաքին համագործակցության, ՇՊՀ միջազգայնացման, հասարակական պատասխանատվության ու տեսանելիության ապահովման գործընթացի կազմակերպումը, համակարգումն ու իրականացումն է:

2.2. ***Կենտրոնի հիմնական խնդիրներն են.***

2.2.1. Արտաքին համագործակցության կապերի հաստատում ու զարգացում, ՇՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին հանրապետական ու միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվության և աջակցության տրամադրում:

2.2.2. Բուհերի կարողությունների զարգացմանը միտված ծրագրերում ՇՊՀ-ի մասնակցության ապահովում և խթանում:

2.2.3. Միջազգային ակադեմիական փոխանակումների ու կրեդիտային շարժունության ծրագրերում ՇՊՀ վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության ներգրավման աշխատանքների կազմակերպում և համակարգում:

2.2.4. ՇՊՀ-ի միջազգայնացմանն ուղղված գործընթացների ապահովում ու խթանում՝ ըստ միջազգայնացման ազգային ռազմավարության գերակա ուղղությունների:

2.2.5. Հասարակայնության հետ ՇՊՀ կապերի խթանում ու զարգացում, լրատվամիջոցների հետ աշխատանքների համակարգում:

2.2.6. ՇՊՀ-ի և համալսարանի կազմում գտնվող ուսումնական հաստատությունների մասին հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը նպաստող նյութերի պատրաստում ու տարածում:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- 3.1. Մշակել, ներդնել ՇՊՀ-ի արտաքին համագործակցությանն ու միջազգայնացմանն ուղղված ռազմավարություն, համապատասխան ընթացակարգեր և համակարգել դրանց իրականացման գործընթացը:
- 3.2. Իրագրել ՇՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին հանրապետական ու միջազգային համագործակցության դրամաշնորհային ծրագրերի մասին:
- 3.3. Աջակցել ՇՊՀ ներքին շահառուներին՝ հանրապետական և միջազգային ակադեմիական շարժունության ու փոխանակման ծրագրերին դիմելու, մասնակցելու գործընթացում:
- 3.4. Ձևակերպել արտաքին համագործակցության ծրագրերին մասնակցող ՇՊՀ պաշտոնական պատվիրակությունների, վարչական ու պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների գործուղումների փաստաթղթերը:
- 3.5. Կազմել և ուղարկել ՀՀ և արտասահմանյան գործընկեր պատվիրակությունների, մասնագետների և ուսանողների հրավերների համար անհրաժեշտ փաստաթղթերը, կազմակերպել նրանց ընդունելությունը:
- 3.6. Հասարակությանն իրագրել ՇՊՀ հմնական նպատակների ու գործառույթների, գործունեության հիմնական ոլորտների, իրականացված ու նախատեսվող գործողությունների մասին:
- 3.7. Լուսաբանել և խթանել ՇՊՀ-հասարակություն կապերի ընդլայնմանն ու բազմազանեցմանը, ինչպես նաև դրա իրականացման որակի բարելավմանը՝ «Համալսարանական լրագիր» պարբերական ծրագրի, հաղորդումների, ՇՊՀ կայքէջի ու սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Facebook, LinkedIn, Instagram, Twitter):
- 3.8. Արձագանքել հետադարձ կապի միջոցով ներքին ու արտաքին շահառուներից ստացված հաղորդագրություններին ու հարցումներին:
- 3.9. Արտաքին շահառուների համար պարբերաբար կազմակերպել և անցկացնել վերապատրաստումներ՝ ըստ համապատասխան ոլորտների:

3.10. Իրականացնել հասարակական կարծիքի, հետադարձ կապի արդյունքների ուսումնասիրություն և մշտադիտարկում:

3.11. Մասնակցել ՇՊՀ ինքնավերլուծության, հավատարմագրման գործընթացներին:

3.12. Մասնակցել ՇՊՀ Կանոնադրությունից, ռազմավարական ծրագրից և սույն Կանոնակարգից բխող այլ աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

4.1. Կենտրոնը ՇՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է, որն անմիջականորեն ենթարկվում է ՇՊՀ ռեկտորին:

4.2. Կենտրոնի աշխատանքները ղեկավարում է Կենտրոնի տնօրենը, ում պաշտոնին նշանակում և պաշտոնից ազատում է ՇՊՀ ռեկտորը:

4.3. Կենտրոնի աշխատակիցները նշանակվում և ազատվում են աշխատանքից Կենտրոնի տնօրենի առաջարկությամբ՝ ՇՊՀ ռեկտորի հրամանով:

4.4. Կենտրոնի աշխատակազմի իրավասություններն ու պարտականությունները սահմանվում են պաշտոնի անձնագրով:

4.5. Կենտրոնը հիմնվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ՇՊՀ ռեկտորի ներկայացմամբ՝ գիտխորհրդի որոշման և հոգաբարձուների խորհրդի հաստատման հիման վրա: